



## ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

### ԵՏՄ-ից ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ի հարկման բազայի որոշման վերաբերյալ

Հարց

ՌԴ-ից ներմուծվել է 2.257.500 ռուբլի արժողությամբ հիմնական միջոց: Համաձայն երկկողմանի կնքված ներկայացուցչական պայմանագրի հայաստանյան կազմակերպությունը հանդիսանում է որպես բեռը ստացող, իսկ մեկ այլ շվեյցարական կազմակերպություն գնորդ-վճարող, որին իր բոլոր ծառայությունների համար վճարվել է 22.925 ԱՄՆ դոլար: Արդյունքում ամբողջ գործարքի արժեքը կազմել է 56.800 ԱՄՆ դոլար, որը փոխանցվել է շվեյցարական կազմակերպությանը: Ներմուծման հարկային հայտարարագրում ԱԱՀ-ի հարկման բազան ընդունվել է ամբողջ արժեքը /հիմնական միջոց+ծառայության արժեք/: Տվյալ դեպքում ԱԱՀ-ի հարկման բազան պետք է ընդունել ամբողջ արժեքը, թե՞ միայն հիմնական միջոցի ձեռքբերման արժեքը:

Պատասխան

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 61-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման դեպքում, եթե օրենսգրքի 62-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ, ապա ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ներմուծվող ապրանքի ձեռքբերման արժեքը, իսկ օրենսգրքի 5-րդ բաժնի համաձայն՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի ներմուծման դեպքում՝ ներմուծվող ապրանքի ձեռքբերման արժեքի և օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի հանրագումարը:

«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի անբաժանելի մաս համարվող՝ «Ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման և դրանց



վճարման նկատմամբ վերահսկողության կարգի մասին» N18 հավելվածով սահմանված արձանագրության 14-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ի վճարման նպատակով հարկման բազան որոշվում է ներմուծված ապրանքները հարկ վճարողի մոտ հաշվառման վերցնելու ամսաթվով (սակայն ոչ ուշ, քան այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված ժամկետը, որի տարածք ներմուծվում են ապրանքները)՝ հիմք ընդունելով ձեռք բերված ապրանքների (այդ թվում՝ դրանց պատրաստման մասին պայմանագրով կատարված աշխատանքների արդյունք հանդիսացող ապրանքների) արժեքը: Ձեռք բերված ապրանքների (այդ թվում՝ դրանց պատրաստման մասին պայմանագրով աշխատանքների կատարման արդյունք հանդիսացող ապրանքների) արժեք է գործարքի այն գինը, որը ենթակա է ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) համար մատակարարին վճարմանը՝ պայմանագրի պայմանների համաձայն:

Հաշվի առնելով վերոգրյալը նկարագրված դեպքում, եթե՝

1) ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ներմուծման մասով վաճառողի և գնորդի միջև կնքված պայմանագրի պայմաններին համապատասխան ձեռքբերված ապրանքի արժեքը ներառում է ապրանքի և վաճառողի կողմից մատուցված ծառայությունների արժեքը (գործարքի այն գինը, որը ենթակա է ապրանքների համար մատակարարին վճարման), ապա ԱԱՀ-ով հարկման բազա՝ ապրանքի ձեռքբերման արժեք է համարվում ապրանքի և ծառայությունների արժեքի հանրագումարը,

2) ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ներմուծման մասով վաճառողի և գնորդի միջև կնքված պայմանագրի պայմաններին համապատասխան ապրանքի ձեռքբերման արժեքը ներառում է միայն ապրանքի արժեքը և, միաժամանակ, վաճառողի կողմից մատուցվում են առանձին ծառայություններ, ապա ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում միայն ապրանքի ձեռքբերման արժեքը: Ընդ որում, այդ դեպքում մատակարարի կողմից մատուցված ծառայությունների մասով ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունների հաշվարկման առումով անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀ հարկային օրենսգրքի 39-րդ հոդվածով սահմանված ծառայությունների մատուցման վայրի որոշման կանոնները, ինչպես նաև այդ ծառայությունների մասով ծառայությունների մատուցման վայր ՀՀ տարածք համարվելու դեպքում նաև ՀՀ հարկային օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգավորումները:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

